ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ և ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ И НАУКИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

НАЦИОНАЛЬНЫЙУНИВЕРСИТЕТ АРХИТЕКТУРЫИ СТРОИТЕЛЬСТВА АРМЕНИИ
ЦЕНТР ПО ОБЕСПЕЧЕНИЮ КАЧЕСТВА ОБРАЗОВАНИЯ

MINISTRY OF EDUCATION AND SCIENCE OF THE REPUBLIC OF ARMENIA

NATIONALUNIVERSITY OF ARCHITECTURE AND CONSTRUCTION OF ARMENIA

CENTER OF EDUCATION QUALITY ASSURANCE

3 հունիսի 2016 թ..

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2016 թվականի մայիս ամսին անցկացված՝ուսումնաօժանդակ անձնակազմի հարցման

1. Նախաբան

Համալսարանի ուսումնաօժանդակ կազմի տարակարգերն են՝ լաբորատորիայի վարիչ, ավագ լաբորանտ, լաբորանտ և ուսումնական վարպետ: Համալսարանի ուսումնաօժանդակ կազմը ներառում է 81 աշխատակից[1]:

Հարցմանը ներգրավվել են Համալսարանի ուսումնաօժանդակ կազմի բոլոր աշխատակիցները, սակայն հարցմանը մասնակցել են 52 աշխատակից կամ անձնակազմի 64%-ը: Հարցմանը ներգրավվել են թվով 32 ստորաբաժանում՝ ամբիոն/լաբորատորիա:

Հարցումն իրականացվել է՝ 36 հարցեր պարունակող, «անանուն» հարցաթերթի միջոցով (կից ներկայացվում է Հավելված 1-ում), ընդ որում, հարցերից 8-ը՝ կենսագրական բնույթի, 3-ը՝ «բաց» (նկարագրային), իսկ մնացած 24-ը՝ «փակ» (բալային գնահատում պահանջող) հարցեր էին:

2. Հարցման նպատակը

Հարցումն իրականացվել է հետևյալ նպատակներով.

ա/ պարզել, թե համալսարանի ուսումնաօժանդակ անձնակազմը որքանով է բավարարված իր աշխատանքային պայմաններից՝ աշխատանքային ծանրաբեռնվածություն, միջավայրում տիրող մթնոլորտ, կարիերայի աճի և վերապատրաստման հնարավորություններ, աշխատանքի դիմաց տրվող փոխհատուցում և այլն:

բ/ խթանել ուսումնաօժանդակ կազմի որակական անընդհատ աճը և բարձրացնել նրանց աշխատանքային և հասարակական գործունեության

[1]Տվյալները տրամադրվել են համալսարանի կադրերի բաժնի կողմից

արդյունավետությունը՝ հարցման արդյունքում ձևավորված դիտողությունների և առաջարկությունների հիման վրա:

3. Հարցման գործընթացի կազմակերպում

Հարցման գործընթացը ներառել է հետևյալ փուլերը.

ա/ Հարցաթերթի մշակում, քննարկում և հաստատում.
բ/ հարցվողների (ռեսպոնդենտների) ցուցակի ձևավորում,
գ/ հարցվողներին էլեկտրոնային հարցաթերթերի տրամադրում,
դ/ հարցման արդյունքների ամփոփում և հաշվետվության կազմում:

ա/ Հարցաթերթի մշակում, քննարկում և հաստատում

Հարցաթերթը մշակվել է համալսարանի Կրթության որակի ապահովման կենտրոնի (այսուհետ՝ Որակի կենտրոն) աշխատակիցների կողմից՝ նմանատիպ հարցումների անցկացման միջազգային առաջատար բուհերի փորձի հիման վրա: Ձևավորված հարցաթերթը քննարկվել է համալսարանի վարչական՝ ղեկավար կազմի (ռեկտոր, պրոռեկտորներ, դեկաններ) հետ, որից հետո միայն հաստատվել է որպես վերջնական տարբերակ:

բ/Հարցվողների (ռեսպոնդենտների) ցուցակի ձևավորում

Հարցվողների (ռեսպոնդենտների) ցուցակը տրամադրվել է Կադրերի բաժնի ղեկավարի կողմից:

գ/ Հարցումների անցկացման ընթացքը

- Հարցումն իրականացնելու նպատակով հարցաթերթերի էլեկտրոնային տարբերակը LimeSurvey վեբ-ծրագրի միջոցով ուղարկվել է հարցվողների համալսարանական էլեկտրոնային հասցեներին: Հարցվողները լրացրել են էլեկտրոնային հարցաթերթերը, որոնք «անանուն» տարբերակով (Anonymous type) մուտքագրվել են ընդհանուր տվյալների բազա:
- Հարցվողները՝ Որակի կենտրոնի աշխատակիցների կողմից, նախապես տեղեկացվել են անցկացվող հարցման նպատակների, խնդիրների և հարցման մեթոդիկայի վերաբերյալ:

դ/ Հարցման արդյունքների ամփոփում և հաշվետվության կազմում

Հարցումների գործընթացը ավարտելուց հետո՝ Որակի կենտրոնի աշխատակիցները՝ հարցաթերթերից ստացված տվյալների հիման վրա իրականացրել են վերլուծություն և կազմել սույն հաշվետվությունը:

4. Ընդհանուր տվյալներ

Հարցման մասնակիցների շարքում կանայք բացարձակ մեծամասնություն են կազմում՝ հարցվածների 92%-ը: Համալսարանի ուսումնա-օժանդակ անձնակազմում ՝հարցմանը մասնակցած անձանց թվում, մեծամասնություն են կազմում մինչև 30 տարեկան աշխատակիցները՝ 42% (22 հոգի): Հարցմանը մասնակցած 52 աշխատակիցների տարիքային բաշխվածությունը ներկայացվում է ստորև՝ Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1. Հարցմանը մասնակցած աշխատակիցների տարիքային բաշխվածությունը

	Անձանց թիվը	Ընդհանուրը
մինչև30 տարեկան	22	42%
31-45 տարեկան	9	17.5 %
46-60 տարեկան	9	17.5 %
60տ-ից բարձր	12	23 %
Ընդհանուրը	52	100%

Հարցման մասնակիցների 65%-ը (35 հոգի) նշել է, որ ունի մագիստրոսի, իսկ 19%-ը՝ բակալավրի աստիճան: Հարցման մասնակիցների 6%-ը նշել է, որ ունի միջին մասնագիտական կրթություն, իսկ մյուս 10%-ը չի պատասխանել այս հարցին:

Հարցման մասնակիցների 85%-ը (44 հոգի) ունեն 1 դրույքաչափի, իսկ 12%-ը՝ (6 հոգի) 0.5 դրույքաչափի զբաղվածություն: Ըստ հարցման արդյունքում ստացված տվյալների, հարցվածներից 9 հոգի կամ 17%-ը դասավանդում են, նրանցից 6-ը դասավանդում են 1 դրույքով:

Հարցման բոլոր մասնակիցները նշել են, որ ազատ տիրապետում են ռուսերեն լեզվին, հարցվածների 48%-ը (25 հոգի) տիրապետում է անգլերեն լեզվին, 1-ական հարցվողներ տիրապետում են ֆրանսերեն և գերմաներեն լեզուներին: Հարցվածներից 2-ը նշել են, որ տիրապետում են անգլերեն, ռուսերեն և իտալերեն լեզուներին:

5. Աշխատանքային գործընթացներ

Հարցման արդյունքները վերլուծելիս պարզ դարձավ, որ համալսարանի ուսումնաօժանդակ անձնակազմի՝ հարցման մասնակիցների ավելի քան 80%-ն ընդհանուր առմամբ (լիովին՝ 52% և մասամբ՝ 31%) բավարարված է աշխատանքային պայմաններից (միջին գնահատականը՝ 1.7):

Հարցմա նմասնակիցների 92%-ը «լիովին համաձայն եմ» (1 բալ) գնահատել է հարցաթերթի 12-րդ հարցին՝ «Համալսարանի ղեկավարությունն ու աշխատակազմն ինձ բարյացակամորեն են ընդունել՝ որպես նոր աշխատակցի»: Հարցման մասնակիցների 79%-ը «Ես ծանոթ եմ իմ գործունեության առնչվող կանոնակարգերին» հարցին (հարց 13) տվել է «լիովին համաձայնեմ» (1 բալ) պատասխանը, իսկ հաջորդ՝ «Ես ծանոթ եմ բուհի առաքելության ու

ռազմավարությանը» հարցին «լիովին համաձայնեմ» (1 բալ) պատասխան տվել են հարցման մասնակիցների 65%-ը, ընդորում հարցման մասնակիցների 12%-ն այս հարցին տվել է «բոլորովին համաձայն չեմ» (4 բալ) պատասխան:

Հարցման մասնակիցների 71%-ը նշել են, որ ունեն բոլոր միջոցներն ու ռեսուրսները դասավանդման գործընթացը որակյալ և արդյունավետ կազմակերպելու համար (միջին գնահատական՝ 1.62): Ինչպես նաև, հարցման մասնակիցների 67%-ը նշել է, որ ընդհանուր առմամբ համալսարանի լաբորատորիաների հագեցվածությունը նպաստում է ուսումնառության արդյունավետության բարձրացմանը (միջին գնահատական՝ 1.9), միևնույն ժամանակ, այս հարցին հարցման մասնակիցների 15 %-ը տվել է «բոլորովին համաձայն չեմ» (4 բալ) պատասխան:

Հարցման մասնակիցների 95%-ը գտնում են, որ իրենց գիտելիքները և փորձառությունը (լիովին՝ 81% և մասամբ՝ 14%) համապատասխանում են իրենց աշխատանքին:

Ստորև՝ Աղյուսակ 2-ում, ներկայացված են հարցմանը մասնակցած՝ ՃՇՀԱՀ ուսումնաօժանդակ անձնակազմի 52 անդամների աշխատանքային գործընթացին վերաբերող մի շարք խնդիրների գնահատականները:

Աղյուսակ 2. Աշխատանքային գործընթացների գնահատումը ուսումնաօժանդակ անձնակազմի կողմից

Հ.	Հարց	Միջին գնահատական	Լիովին համա-ձայն եմ	Մասամբ համաձայն եմ	Մասամբ համաձայն չեմ	Բոլորովին համաձայն չեմ
10	Ընդհանուր առմամբ ես բավարարված եմ համալսարանում իմ աշխատանքով և աշխատանքային պայմաններով:	**1.7**	27 (52%)	16 (31%)	5 (10%)	4 (7%)
11	Աշխատանքի ընդունվելիս, ինձ աշխատանքին նախապատրաստելու գործընթացը լիարժեք էր կազմակերպված;	**1.4**	36 (69%)	13 (25%)	2 (4%)	1 (2%)
12	Համալսարանի ղեկավարությունն ու աշխատակազմն ինձ բարյացակամորեն են ընդունել՝ որպես նոր աշխատակցի:	**1.1**	48 (92%)	3 (6%)	-	1 (2%)
13	Ես ծանոթ եմ բուհի առաքելությանն ու ռազմավարությանը:	**1.6**	34 (65%)	10 (19%)	-	6 (12%)
14	Ես ծանոթ եմ իմ գործունեությանն առնչվող կանոնակարգերին:	**1.3**	41 (79%)	6 (12%)	4 (7%)	1 (2%)
15	Իմ աշխատանքի նկարագիրն օբյեկտիվորեն արտացոլում է իմ աշխատանքային	**1.4**	33 (64%)	12 (23%)	2 (4%)	6 (12%)

[2] 1 – լիովին գոհ են, 2 – գոհ են, 3- մասամբ գոհ են, 4 – բոլորովին գոհ չեն Անի ջան, այս հղումը չգտա տեքստում

	պարտականությունները:					
16	Իմ աշխատանքային ծանրաբեռնվածությունը համապատասխանում է սահմանվածին:	**1.5**	34 (65%)	13 (25%)	3 (6%)	2 (4%)
17	Ես ունեմ բոլոր միջոցներն ու ռեսուրսները իմ աշխատանքը որակյալ և արդյունավետ կատարելու համար:	**1.6**	37 (71%)	7 (14%)	1 (2%)	1 (2%)
18	Համալսարանի լաբորատորիաների հագեցվածությունը նպաստում է ուսումնառության արդյունավետության բարձրացմանը:	**1.9**	27 (52%)	8 (15%)	5 (10%)	8 (15%)
19	Իմ գիտելիքները և փորձառությունը համապատասխանում են իմ աշխատանքին:	**1.2**	42 (81%)	7 (14%)	2 (4%)	6 (12%)

6. Աշխատավարձ, կարիերայի աճ և մասնագիտական զարգացում/ վերապատրաստումներ

Ինչպես երևում է աղյուսակ 3-ից, հարցման մասնակիցներն ընդհանուր առմամբ այնքան էլ գոհ չեն իրենց աշխատավարձից և տրամադրվող այլ նյութական օժանդակություններից (հարց հ. 23, միջին գնահատական՝ 2.5): Հարցման մասնակիցների 34 %-ը նշել է, որ իր աշխատավարձը չի համապատասխանում իր աշխատանքային պարտականություններին (հարց հ. 24, միջին գնահատական՝ 2.3): Նրանք նաև կարծում են, որ բավարար հնարավորություններ ունեն վերապատրաստման և մասնագիտական զարգացման համար (հարց հ. 20, միջին գնահատական՝ 2): Միևնույն ժամանակ, հարցվողները կարծում են, որ ընդհանուր առմամբ ունեն կարիերայի աճի հնարավորություն (Աղյուսակ 3, հարց 21-ի միջին գնահատականը՝ 2.0) և կարիերայի աճի և աշխատավարձի բարձրացման համար առկա են արդար և հավասար պայմաններ (Աղյուսակ 3, հարց 22-ի միջին գնահատականը՝ 1.9):

Աղյուսակ 3. Աշխատավարձի, կարիերայի աճի և վերապատրաստման հնարավորությունների գնահատման արդյունքները

Հ.	Հարց	**Միջին Գնահատական**	Լիովին համաձայն եմ (1)	Համաձայն եմ (2)	Մասամբ համաձայն չեմ (3)	Բոլորովին համաձայն չեմ (4)
20	Համալսարանը հնարավորություններ է ընձեռում վերապատրաստման և մասնագիտական զարգացման համար:	**2**	22 (42%)	12 (23%)	6 (12%)	7 (14%)
21	Համալսարանում ունեմ կարիերայի աճի հնարավորություն:	**2**	23 (44%)	11 (21%)	5 (10%)	8 (15%)
22	Կարիերայի աճի և աշխատավարձի բարձրացման համար առկա են հավասար և արդար պայմաններ:	**1.9**	30 (58%)	12 (23%)	1 (2%)	4 (7%)

23	Ես գոհ եմ իմ աշխատավարձից և տրամադրվող այլ նյութական օժանդակություններից:	**2.5**	20 (39%)	17 (33%)	4 (7%)	14 (27%)
24	Իմ աշխատավարձը համապատասխանում է իմ աշխատանքային պարտականություններին:	**2.3**	17 (33%)	15 (29%)	4 (7%)	14 (27%)

7. Աշխատանքային միջավայր

Ինչպես երևում է Աղյուսակ 4-ում ներկայացված տվյալներից, Համալսարանի ուսումնաօժանդակ անձնակազմի հարցմանը մասնակցած 52 աշխատակիցներն ընդհանուր առմամբ գոհ են իրենց աշխատանքային միջավայրից, գնահատում են նաև անմիջական ղեկավարի հետ աշխատանքն ու հաղորդակցությունը:

Հարցվածների մեծամասնությունը՝ 87%-ը կարծում է, որ իր անմիջական ղեկավարը կառուցողական և քաջալերող մոտեցում ունի իր աշխատանքի նկատմամբ (հարց հ. 25, միջին գնահատական՝ 1.2), իսկ հարցվածների 79%-ը նշել է, որ իր ղեկավարը խրախուսում է երկուստեք հաղորդակցությունը: Ինչպես նաև, հարցվածների 79%-ը նշել է, որ իրենց աշխատանքին վերաբերող որոշումների կայացման ընթացքում ունեն արտահայտվելու հնարավորություն (հարց հ. 27, միջին գնահատական՝ 1.3) և ժամանակին են տեղեկանում համալսարանին առնչվող ընդհանուր որոշումների մասին (հարց հ. 28, միջին գնահատական՝ 1.7):

Հարցման մասնակիցների 86%-ն ընդհանուր առմամբ (լիովին՝ 65% և մասամբ՝ 21%) համաձայն է, որ Համալսարանի ղեկավարության ջանքերը նպաստում են աշխատանքային պայմանների բարելավմանը: Միևնույն ժամանակ, համալսարանի ուսումնա-օժանդակ անձնակազմի՝ հարցմանը մասնակցած 52 աշխատակիցների 17%-ը «բոլորովին համաձայն չեմ» (4 բալ) պատասխանն են տվել ներկայացված՝ «Համալսարանում որոշումների կայացման գործընթացը հասկանալի է և թափանցիկ» (հարց հ. 32, միջին գնահատական՝ 1.8) հարցին:

Աղյուսակ 4. Աշխատանքային միջավայրի գնահատման արդյունքները

Հ.	Հարց	**Միջին գնահատական**	Լիովին համաձայն եմ (1)	Համաձայն եմ (2)	Մասամբ համաձայն չեմ (3)	Բոլորովին համաձայն չեմ (4)
25	Իմ անմիջական ղեկավարը կառուցողական և քաջալերող մոտեցում ունի աշխատանքիս նկատմամբ:	**1.2**	45 (87%)	2 (4%)	-	3 (6%)
26	Ղեկավարս խրախուսում է երկուստեք համագործակցությունը:	**1.3**	41 (79%)	7 (14%)	-	2 (4%)
27	Իմ աշխատանքին վերաբերող որոշումների կայացման ընթացքում ունեմ արտահայտվելու հնարավորություն;	**1.3**	39 (75%)	9 (17%)	1 (2%)	2 (4%)
28	Համալսարանին առնչվող ընդհանուր որոշումներին ժամանակին եմ տեղեկանում:	**1.7**	31 (60%)	11 (21%)	4 (7%)	5 (10%)

29	Համալսարանում բոլոր աշխատակիցների հանդեպ հավասար և հարգալից վերաբերմունք է ցուցաբերվում:	**1.4**	37 (71%)	10 (19%)	1 (2%)	2 (4%)
30	Առկա է թիմային աշխատանքի և համագործակցության ոգի:	**1.5**	35 (67%)	11 (21%)	3 (6%)	2 (4%)
31	Խնդրահարույց հարցերը լուծվում են անաչառորեն:	**1.5**	31 (60%)	11 (21%)	1 (2%)	3 (6%)
32	Համալսարանում որոշումների կայացման գործընթացը հասկանալի է և թափանցիկ:	**1.8**	30 (58%)	11 (21%)	4 (7%)	5 (10%)
33	Համալսարանի ղեկավարության ջանքերը նպաստում են աշխատանքային պայմանների բարելավմանը:	**1.5**	34 (65%)	11 (21%)	2 (4%)	4 (7%)

8. Բաց հարցեր

Հարցաթերթիկում ներառվել են նաև թվով 3 բաց հարցեր, որոնց վերաբերյալ ևս հարցվողները ներկայացրել են իրենց պատասխանները: Ընդ որում, ‹‹Համալսարանում ինձ ամենից շատ դուր է գալիս›› հարցին պատասխանել է հարցվածների 81%-ը, ‹‹Համալսարանում ես կառաջարկեի բարեփոխել›› հարցին՝ 73%-ը, իսկ վերջին՝ ‹‹Գործունեությունս բարելավելու համար հետևյալ վերապատրաստումների կարիքն ունեմ ›› հարցին պատասխանել է հարցվածների 62%-ը:

ա/ Համալսարանի ուսումնաօժանդակ անձնակազմի պատասխանները՝ «Համալսարանում ինձ ամենից շատ դուր է գալիս» հարցին

«Համալսարանում ինձ ամենից շատ դուր է գալիս» հարցին (Հարց 34) ուսումնաօժանդակ անձնակազմի 52 հարցվածներից՝ պատասխանել են 42 հոգի և ընդհանուր առմամբ տրվել է 49 պատասխան: Նրանց կողմից նշված դրական կողմերը ներկայացված են Աղյուսակ 5-ում.

Աղյուսակ 5. Հարցվողների կողմից նշված դրական կողմերը

Հ/Հ	**Նշված դրական կողմերը**	Կրկնվելու հաճախա-կանությունը
1	Աշխատանքային միջավայրը, առողջ մթնոլորտը	11
2	Վերանորոգումը և մաքրությունը	8
3	Համալսարանի ղեկավարության վերաբերմունքն աշխատակիցներին	6
4	Աշխատանքը և անձնկազմը	14
5	Ուսուցման գործընթացը և կարգապահությունը	8
6	Աշխատանքին՝ երիտասարդների ներգրավումը	1
7	Համալսարանում անգլիական սեկտորի առկայությունը	1
8	Անաչառ վերաբերմունքը	1

1. **բ/ Համալսարանի ուսումնաօժանդակ անձնակազմի պատասխանները՝ «Համալսարանում ես կառաջարկեի բարեփոխել /իրականացնել» հարցին**

«Համալսարանում ես կառաջարկեի բարեփոխել /իրականացնել» հարցին (Հարց 35) ուսումնաօժանդակ անձնակազմի 52 հարցվածներից՝ պատասխանել են 38 հոգի և ընդհանուր առմամբ տրվել է 42 առաջարկություն: Նրանց կողմից նշված բարելավման ուղղությունները ներկայացված են աղյուսակ 6-ում:

Աղյուսակ 6. Հարցվողների կողմից նշված բարելավման ուղղությունները

Հ/Հ	**Բարելավման ուղղությունները**	Կրկնվելու հաճախա-կանությունը
1	Հստակեցնել աշխատանքային պարտականությունները պաշտոնի անձնագրի միջոցով	4
2	Նորացնել աշխատանքային համակարգիչները և կահույքը	4
3	Վերանայել աշխատավարձերը	10
4	Վերազինել լաբորատորիաները, մասնագիտական լսարանները	7
5	Բարձրացնել ուսուցման որակը	4
6	Բարելավել ճաշարանը, սանհանգույցները	7
7	Խոսքի ազատություն	1
8	Աշխատակազմը համալրել երիտասարդներով	1
9	Ունենալ ընդհանուր ապահովագրական փաթեթ	1
10	Լավագույն ուսանողների ուսուցման կազմակերպում արտասահմանյան բուհերում	2
11	Մշակել լավագույն աշխատակիցների խրախուսման համակարգ	1

2. <u>գ/ Համալսարանի ուսումնաօժանդակ անձնակազմի պատասխանները՝ «Գործունեությունս բարելավելու համար հետևյալ վերապատրաստումների կարիքն ունեմ» հարցին</u>

«Գործունեությունս բարելավելու համար հետևյալ վերապատրաստումների կարիքն ունեմ» հարցին (Հարց 36) ուսումնաօժանդակ անձնակազմի 52 հարցվածներից՝ պատասխանել են 37 հոգի և ընդհանուր առմամբ տրվել է 41 պատասխան: Հարցվածների 29%-ը չի պատասխանել այս հարցին, իսկ 14%-ը նշել է, որ վերապատրաստումների կարիք չունի: Հարցվածների 12%-ը նշել է, որ մասնագիտական վերապատրաստման կարիք ունի, իսկ հարցվածների 7%-ը նշել է, որ առհասարակ որևէ վերապատրաստման կարիք չունի: Հարցմանը մասնակցած աշխատակիցները առավել հաճախ նշել են, որ իրենց գործունեությունը բարելավելու և դասավանդման արդյունավետության բարձրացման համար հետևյալ վերապատրաստումների կարիքն ունեն. (տես՝ Աղյուսակ 7.)

Աղյուսակ 7. Հարցվողների կողմից նշած վերապատրաստումների կարիքները

Հ/Հ	**Վերապատրաստումների կարիք**	Կրկնվելու

		հաճախա- կանությունը
1	Օտարլեզուներ՝անգլերեն	14
2	Համակարգչային	8
3	Մասնագիտականվերապատրաստում, որակավորմանբարձրացում	6
4	AutoCAD, 3D Max ծրագրեր	3
5	Դասավանդման նորագույն մեթոդներ	1

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան (ՃՇՀԱՀ)

Ա. _____

Ամսաթիվ

<u>Հարցաթերթ՝ համալսարանի ուսումնա-օժանդակ անձնակազմիհարցման</u>

1. Համալսարանում աշխատանքի ընդունվելու տարին՝ _____ թ.

2. Տարիքը՝ 1 մինչև 30 տարեկան 2 31-45 տարեկան
   3 46-60 տարեկան 4 60 տ-ից բարձր

3. Սեռը՝ 1 իգական 2 արական

4. Դուք հանդիսանում եք՝
   1 լրիվ դրույքով, հիմնական աշխատակից
   2 կես դրույքով, հիմնական աշխատակից
   3 Այլ, նշել _____

5. Դուք դասավանդու՞մ եք՝ 1 այո 2 ոչ

6. Եթե այո, ի՞նչ դրույքով՝ 1 լրիվ դրույքով 2 կես դրույքով
   3 Այլ, նշել _____

7. Ձեր կրթությունը՝
   1 Միջին մասնագիտական 2 Բակալավր կամ համարժեք
   3 Մագիստրոս կամ համարժեք 4 Գիտությունների թեկնածու, դոկտոր
   5 Այլ, նշել _____

8. Նշեք այն օտար լեզուները, որոնց ազատ տիրապետում եք՝
   1 Ռուսերեն 2 Անգլերեն
   3 Այլ, նշել _____

9. Արդյոք համաձա՞յն եք հետևյալ պնդումների հետ.

		Լիովին համաձայն եմ	Մասամբ համաձայն եմ	Մասամբ համաձայն չեմ	Բոլորովին համաձայն չեմ	Չգիտեմ
10.	Ընդհանուր առմամբ, ես բավարարված եմ համալսարանում իմ աշխատանքով և աշխատանքային պայմաններով:	(1)	(2)	(3)	(4)	(0)
11.	Աշխատանքի ընդունվելիս, ինձ աշխատանքին նախապատ-րաստվելու գործընթացը լիարժեք էր կազմակերպված:	(1)	(2)	(3)	(4)	(0)
12.	Համալսարանի ղեկավարությունն ու աշխատակազմն ինձ բարյացակամորեն են ընդունել՝ որպես նոր աշխատակցի:	(1)	(2)	(3)	(4)	(0)
13.	Ես ծանոթ եմ ԲՈՒՀ-ի առաքելությանն ու ռազմավարությանը:	(1)	(2)	(3)	(4)	(0)
14.	Ես ծանոթ եմ իմգործունեությաննառնչվող կանոնակարգերին:	(1)	(2)	(3)	(4)	(0)
15.	Իմ աշխատանքի նկարագիրը օբյեկտիվորեն արտացոլում է իմ աշխատանքային պարտականությունները:	(1)	(2)	(3)	(4)	(0)
16.	Իմ աշխատանքային ծանրաբեռնվածությունը համապատաս-խանում է սահմանվածին:	(1)	(2)	(3)	(4)	(0)

17.	Ես ունեմ բոլոր միջոցներն ու ռեսուրսները իմ աշխատանքը որակյալ և արդյունավետ կատարելու համար:	(1)	(2)	(3)	(4)	(0)
18.	Համալսարանի լաբորատորիաների հագեցվածությունը նպաստում է ուսումնառության արդյունավետության բարձրացմանը:	(1)	(2)	(3)	(4)	(0)
19.	Իմ գիտելիքները և փորձառությունը համապատասխանում են իմ աշխատանքին:	(1)	(2)	(3)	(4)	(0)
20.	Համալսարանը հնարավորություններ է ընձեռում վերապատրաստման և մասնագիտական զարգացման համար:	(1)	(2)	(3)	(4)	(0)
21.	Համալսարանում ունեմ կարիերայի աճի հնարավորություն:	(1)	(2)	(3)	(4)	(0)
22.	Կարիերայի աճի և աշխատավարձի բարձրացման համար առկա են հավասար և արդար պայմաններ:	(1)	(2)	(3)	(4)	(0)
23.	Ես գոհ եմ իմ աշխատավարձից և տրամադրվող այլ նյութական օժանդակություններից:	(1)	(2)	(3)	(4)	(0)
24.	Իմ աշխատավարձը համապատասխանում է իմ աշխատանքային պարտականություններին:	(1)	(2)	(3)	(4)	(0)
25.	Իմ անմիջական ղեկավարը կառուցողական և քաջալերող մոտեցում ունի աշխատանքիս նկատմամբ:	(1)	(2)	(3)	(4)	(0)
26.	Ղեկավարս խրախուսում է երկուստեք հաղորդակցությունը:	(1)	(2)	(3)	(4)	(0)
27.	Իմ աշխատանքին վերաբերող որոշումների կայացման ընթացքում ունեմ արտահայտվելու հնարավորություն:	(1)	(2)	(3)	(4)	(0)
28.	Համալսարանին առնչվող ընդհանուր որոշումների մասին ժամանակին եմ տեղեկանում:	(1)	(2)	(3)	(4)	(0)
29.	Համալսարանում բոլոր աշխատակիցների հանդեպ հավասար և հարգալից վերաբերմունք է ցուցաբերվում:	(1)	(2)	(3)	(4)	(0)
30.	Առկա է թիմային աշխատանքի և համագործակցության ոգի:	(1)	(2)	(3)	(4)	(0)
31.	Խնդրահարույց հարցերը լուծվում են անաչառորեն:	(1)	(2)	(3)	(4)	(0)
32.	Համալսարանում որոշումների կայացման գործընթացը հասկանալի է և թափանցիկ:	(1)	(2)	(3)	(4)	(0)
33.	Համալսարանի ղեկավարության ջանքերը նպաստում են աշխատանքային պայմանների բարելավմանը:	(1)	(2)	(3)	(4)	(0)

34. Համալսարանում ինձ ամենից շատ դուր է գալիս (նշել 2-ը)՝
    1. _____
    2. _____

35. Համալսարանում եսկառաջարկեի բարեփոխել/իրականացնել (նշել 2-ը)՝
    1. _____
    2. _____

36. Գործունեությունս բարելավելու համար հետևյալ վերապատրաստումների կարիքն ունեմ (նշել 2-ը)՝
    1. _____

2. _____